

էին սխտական անվտանգութեան օրգանները իրենց հանցանքը խոստովանելու, պատմեցին, թե նրանք հրահանգ են ստացել աշխատանք կատարել սովետական և պարտիական աշխատողներին, գրականութեան ու գիտութեան գործիչներին վարկաբեկելու ուղղութեամբ, կազմել անանուն պրոպագանդիստ մատնութիւններ:

Այս բոլորից հետևում է, որ անանուն հայտարարութիւններին չի կարելի մոտենալ այնպես, ինչպես պետք է վերաբերվել հեղինակների ստորագրած հայտարարութիւններին ու դանդասների քննութեանը:

Այնինչ մի քանի պարտիական, սովետական և հասարակական կազմակերպութիւններում սխալ վերաբերմունք է տեղի ունեցել դեպի անանուն հայտարարութիւնները, երբ դրանք բոլոր դեպքերում էլ դիտվում են որպէս վրատահութեան արժանի փաստաթղթեր:

Հաճախ անանուն նամակներում պարունակվող զրպարտիչ հերյուրանքները հրապարակվում են, կեղտոտ և շարամիտ հնարովի հայտարարութիւնները քննարկվում ան նիստերում և ժողովներում, այն մարդկանցից, որոնց դեմ են դրվել անանուն նամակները բացարձակութեամբ են պահանջում և առաջարկում քաջքում ան բոլորովին անմեղ մարդկանց: Եվ թեպետ անանուն նամակները արդարաւր չեն հաստատվում, իսկ այն անձինք, որոնց դեմ են դրվել դրանք, անմեղ են ճանաչվում, այնուամենայնիվ հաճախ մնում են դրանց վնասակար հետևանքները: Ազնիվ և նիւրբամտ մարդկանց վրա կասկածի սովեթ է ընկնում, նրանք սակավ վատահ են դասուում աշխատանքում, նվազեցնում են պահանջուտութիւնը ստորադրյալներին հանգեպ, աշխատում են վախճանելով: Հայտնի են դեպքեր, երբ աշխատողները իրենց գրաված պաշտոնից անզատվել կամ այլ աշխատանքի են փոխադրվել պարզապես այն հիման վրա, որ նրանց դեմ անանուն շատ և նամակներ են ստացվել:

Կոմունիստ ինժեներ ընկ. Գորոխովսկին հաղորդում է, որ Կիևի մաշկավեներոլոգիական ինստիտուտի աշխատողներից մեկի դեմ գրվել է 56 անանուն հայտարարութիւն: «Շարք չի անցնում, որ ինստիտուտի աշխատակիցներից որևէ մեկի դեմ անանուն նամակ կազմված չլինի: Պիտում էր, որ պարտիայի Կիևի Ստալինյան ուսկոմը պետք է զբաղվեր սովետական ազնիվ մարդկանց ահաբեկող զրպարտիչներով: Ցավոք սրտի, ուսկոմը այլ դիրք է բռնել: Նա կազմակերպում է անանուն հայտարարութիւնների բազմաթիվ ըստուգումներ, դրանով իսկ անանուն զրպարտիչներին բավականութիւն և հնարավորութիւն տալով շարանեղորոն շփելու իրենց կեղտոտ ձեռքերը»:

Այն, ինչ որ հաղորդում է ընկ. Գորոխովսկին, եզակի դեպք չէ: Օրինակ, դեռ վերջերս պարտիայի Կախինի մարզկոմն ստացել է 20 անանուն նամակ Վիշնիչ Վոլոչոկ քաղաքի ղեկավար աշխատողների դեմ: Նրանց մեղադրում էին ծանր հանցագործութիւններին մեջ: Մարզկոմը իր աշխատողներին տասնյոթ անգամ տեղերն է ուղարկել նամակներն ստուգելու: Մեղադրանքներից ոչ մեկը չի հաստատվել:

Պարտիայի Կրասնոդարի երկրկոմի անանուն հայտարարութիւն է ուղարկվել Նովոռոսիյսկից: Պարտիայի քաղկոմի աշխատողները մեղադրվում էին ՍՄԿՊ Կանոնադրութիւնը և սովետական օրենքները խախտելու, քննադատութիւնը ճնշելու մեջ: Այդ հայտարարութիւններն ստուգելու նպատակով երկրկոմը երեք անգամ հանձնարարութիւն ուղարկել: Նրանցից ոչ մեկը չհաստատեց մեղադրանքները:

Քննադատութեան և ինքնաքննադատութեան զարգացման կապակցութեամբ, ինչպես նաև այն բանի հետևանքով, որ պարտիական օրգանները միջոցներ են ձեռք առել զրպարտիչների դեմ, վերջին ժամանակներս անանուն նամակների թիւը մեծ չափով

կրճատվել է: Այնուամենայնիվ շարունակվում է անանուն նամակների ստացումը և դրանք արդարացի գայութի են առաջացնում սովետական մարդկանց մեջ: Ազնիվ, քայքայատու քննադատութեան և ինքնաքննադատութեան զարգացման նկատմամբ ցուցաբերված հոգատարութիւնը, քննադատութեամբ հանդես եկողներին ամեն կերպ պաշտպանելը ոչ մի անոնութիւն չունեն անանուն նամակագիրներին զրպարտիչ հերյուրանքների քննութեան հետ:

Կարող են ասել, որ երբեմն անանուն նամակի մեջ ևս փաստեր են հաղորդվում: Ինչպես վարվել այն ժամանակ:

Իհարկե, չի կարելի ձեռնամուխ մոտենալ գործին, երես դարձնել ստորագրութիւն չունեցող ամեն մի նամակից: Քաղաքական ղեկավարի դերը պետք է դրսևորվի հենց նրանում, որ նա հոտատութիւն ունենա, կարողանա ուշադրութեան արժանի ազդանշանը տարբերել զրպարտչի նկրտումներից: Պարտիական աշխատողները պարտավոր են լավ դիտենալ իրադրութիւնը և իրենց կազմակերպութեան մարդկանց որոշում ընդունելու համար. որոշ դեպքերում անստորագիր նամակը բացարձակութեան կարգով պետք է ստուգվի: Սակայն այդ կարելի է անել ընթացիկ աշխատանքի կարգով, առանց աղմկարարութեան, առանց որևէ հատուկ հանձնաժողովի և քննութեան:

Որպես կանոն, անանուն հայտարարութիւնները չեն կարող ընդունվել որպէս վստահութեան արժանի փաստաթղթեր: Այդ իսկ պատճառով բոլոր անանուն նամակների քննութեան պարտիական արատավոր է. նա խրախուսում է զրպարտիչներին և խառնակիչներին, խանգարում է սովետական մարդկանց ճիշտ դատարարականը, շեղում է ուշադրութիւնը պարտիական, սովետական և տնտեսական օրգանների աշխատանքի իսկական թերութիւնները վերացնելուց: